ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ 2024 Թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

2024 թ.-ին կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 4 հուշագրեր և պայմանագրեր.

- Իսֆարա քաղաքում Տաջիկստանի տեխնոլոգիական համալսարանի մասնաճյուղ
- Տաշկենտի պետական ագրարային համալսարան
- Հարավային Բոհեմիայի համալսարան (Չեխիա)
- Տոկիոյի գյուղատնտեսության և տեխնոլոգիայի համալսարան (Ճապոնիա):

ԷՐԱԶՄՈՒՍ+ ՀԳ1

2024 թ. Էրազմուս+-ի շրջանակներում ՀԱԱՀ-ն ունի կնքված 56 պայմանագրեր, և ընդհանուր առմամբ ՀԱԱՀ-ն այս այս տարի համագործակցել է 43 համալսարանների հետ:

2024 թ.-ին ՀԱԱՀ ՄԿԴ-ը ինչպես նախորդ տարիներին իրականացրեց և կազմակերպեց աշխատակիցների և ուսանողների արտագնա շարժունություն՝ ապահովելով 43 աշխատակիցների վերապատրաստումներ և դասախոսություններ եվրոպական 22 համալսարաններում, 15 ուսանողների ուսուցում կամ պրակտիկա:

Էրազմուս+ շարժունության տվյալներ

		Արտագնա		**Ներգնա**
	Հաստատություն	աշխա-տակից	ուսա-նող	աշխա-տակից
1.	Ավեյրոյի համալսարան	2		
2.	Էվորայի համալսարան	2		1
3.	Վալադոլիդի համալսարան	2		
4.	Ռուսեի Անջել Կնչևի անվան համալսարան	2		
5.	Պորտոի համալսարան	2		

6.	Թրոմսոյի համալսարան	1		
7.	Մալթայի արվեստների, գիտության և տեխնոլոգիայի քոլեջ	1		
8.	Դուբրովնիկի համալսարան	1		
9.	Սևիլիայի համալսարան	1		
10.	Գրանադայի համալսարան	1		
11.	Մարկեի պոլիտեխնիկական համալսարան	5	2	
12.	Կվիձինի Պովիսլանսկու համալսարան	1		
13.	Հունգարիայի գյուղատնտեսական և կենսագիտական համալսարան	6		
14.	Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարան	2		
15.	Կրակովի գյուղատնտեսական համալսարան	2		
16.	Վիեննայի բնական ռեսուրսների և կենսագիտության համալսարան	2		
17.	Պանթեոնի հասարակական ու քաղաքական գիտությունների համալսարան	3		
18.	Կլուժ-Նապոկայի գյուղատնտեսական գիտությունների և անասնաբուժական բժշկագիտության համալսարան	1	2	
19.	Պիրեուսի համալսարան	1		
20.	Սալոնիկի Արիստոտել համալսարան	2		
21.	Արևմտյան Ատտիկայի համալսարան	1	2	
22.	Մինհոյի համալսարան	2		
23.	Կաստելո Բրանկոյի պոլիտեխնիկական ինստիտուտ		2	
24.	Բեժայի պոլիտեխնիակական ինստիտուտ		2	2
25.	Էստոնիայի բնական գիտությունների համալսարան		1	2
26.	Տրոմսոյի Արկտիկական համալսարան		1	
27.	Բնական ռեսուրսերի և կենսագիտությունների համալսարան		1	
28.	Գայզենհայմի համալսարան		2	
29.	Յագելոնյան համալսարան			1
30.	Դեմոկրիտուսի համալսարան			1
31.	Սապիենցայի համալսարան			1

		43	**15**	**8**





Այս տարի ևս, անգլերենի իմացության ցածր մակարդակի պատճառով ուսանողներին հատկացված բազմաթիվ շարժունության մրցույթային տեղեր մնացին թափուր: Այս համալսարանների մեջ են մտնում Հռոմի Սապիենցա համալսարանը, Ռուսեի Անգել Կնչևի անվան համալսարանը, Սալոնիկի համալսարանը, Բրագանսայի

պոլիտեխնիկական համալսարանը, Գրանադայի համալսարանը, Դուբրովնիկի համալսարանը և այլն:

Միաժամանակ նկատվում է նաև անգլերենին տիրապետող աշխատակիցների քանակի կտրուկ նվազում: ՄԿԴ-ն հետևողականորեն փորձում է հնարավորություն տալ այն աշխատակիցներին մասնակցել շարժունությանը, ովքեր կամ չեն մասնակցել, կամ ավելի վաղ են մասնակցեն դրան: Սակայն անգլերենին տիրապետող աշխատակիցների խիստ անբավարարության պատճառով ընտրող հանձնաժողովը ստիպված է լինում նույն աշխատակցին 2 անգամ մասնակցել շարժունության նույն տարում, ինչը ստիպված քայլ է ՄԿԴ-ի կողմից: Հակառակ դեպքում եվրոպական համալսարանները կդադարեն համագործակցությունը ՀԱԱՀ-ի հետ:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

VETFarm «Միջին մասնագիտական կրթության եւ վերապատրաստման օրինակելի համագործակցություն Հայաստանում պիստակի արտադրության ուղղությամբ. աշխարհատարածական մոտեցում» Էրազմուս+ ՀԳ2 նախագծի շրջանակներում 2024 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում ՀԱԱՀ-ի պաշտոնական կայքում ծրագրի համար ստեղծվել է տեղեկատվական հարթակ, տեղի են ունեցել աշխատանքային հադիպումներ տեղական և եվրոպական գործընկերների մասնակցությամբ, որտեղ հիմնականում քննարկվել են անհրաժեշտ սարքավորումների, նոր ստեղծվող մոդուլների վերաբերյալ հարցեր, կազմակերպվել և իրականացվել են ուսումնառության նյութերի ստեղծման և թարգմանության գործընթացները, այդ թվում՝ ֆերմերների համար բույսերի վեգետացիայի ընթացքին հետևելու ծրագրակազմ: Կազմվել և արտասահմանյան գործընկերներին է հանձնվել ծրագրի վերաբերյալ միջանկյալ հաշվետվությունը:

ՀԱԱՀ թիմը մասնակցել է ՄԿՈՒ համակարգում, և ոչ միայն, դասավանդման որակի ապահովման և ժամանակակից պահանջներին բավարարելու ուղղություններով բազմաթիվ վերապատրաստումներին:

LISS24 ծրագրի շրջանակում 2024 թ. ընթացում իրականացվել են ծրագրի համակարգող TURKU UAS գործընկերների կողմից կազմակերպված քննարկումներ,

հստակեցվել են աշխատանքային խմբերում իրականացվող գործողությունները, ուղղությունները, ժամկետները:

TURKU UAS համալսարանում կազմակերպվել է հանդիպում, որտեղ ավելի առարկայական են դարձել հետագա անելիքները WP2 և WP3 աշխատանքների մասով: Մասնավորապես շատ կարևոր էր ծրագրի շրջանակներում կիրառվող սարքերի և ծրագրային միջոցների սպասարկմամբ զբաղվող կազմակերպության գործընկերների հետ հանդիպումը, կարճ դասընթացը, որտեղ ներկայացվեց սարքերի ֆունկցիոնալ հնարավորությունները, կիրառման ոլորտները:

Հելսինկիում տեղ է ունեցել ESC 2024 ամենամյա վաճառքի մրցույթ, որտեղ ՀԱԱՀ-ի ներկայացուցիչները կիրառել են նախնական հմտությունները և տեսական գիտելիքները որպես ժյուրիի անդամներ: Նոյեմբերին Իսպանիայում, Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանում մասնակցել են WP4 քննարկմանը նվիրված հանդիպմանը: Հստակեցվել են Sales Lab-երում կիրառվող և անհրաժեշտ սարքերի և ծրագրային փաթեթների լրակազմի վերաբերյալ հարցերը, ունեն հստակ անվանացանկ՝ պահանջվող սարքերի և դրանք սպասարկող ծրագրերի մասով, իրականացվել են գնման գործընթացին վերաբերվող նախնական, բայց կարևոր առաջին քայլերը:

«Կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» («T-GREEN») եռամյա նախագիծի շրջանակում 2024 թ. մայիսից մեկնարկել են 4-րդ աշխատանքային փաթեթի աշխատանքները, որոնք են՝ 3 միջդիսցիպլինար համատեղ աստիճանների մշակում, լիցենզավորում և փորձարկումը, ինչպես նաև առկա կրթական ծրագրերի վերապրոֆիլավորում մագիստրոսական կրթության և տնտեսության «կանաչ» վերափոխվելուն աջակցելու նոր տեսլականին համահունչ:

«T-GREEN» նախագծի շրջանակում ՀԱԱՀ-ն մշակում և ներդնելու է երկու կրկնակի մագիստրոսական որակավորում՝

1. Կանաչ տնտեսություն և կառավարում մագիստրոսական որակավորում

Double MA Degrees Green Economy and Management

2. Կայուն քաղաքներ մագիստրոսական որակավորում

Double MA Degrees in Sustainable Cities

Վերանայվել է «Սննդամթերքի արտադրության տեխնոլոգիայի բարելավում սննդային հավելումների օգտագործմամբ» առարկան, որը փոխարինվել է

«Սննդամթերքի արտադրության կենսատեխնոլոգիա»-ով: «Կենսավիճակագրություն» առարկան կամընտրայինից դարձել է պարտադիր, վերանայվել են նաև վերջնարդյունքները: Առաջարկվել է մագիստրոսական ծրագրում ներառել «Սննդի արտադրության կենսատեխնոլոգիա», «Ֆերմենտացման գործընթացները սննդի կենսատեխնոլոգիայում» և «Սննդամթերքի կենսամշակման էներգետիկ գնահատումը» առարկաները:

ՀԱԱՀ Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի 05.11.2024թ. մեթոդական խորհրդի և 01.10.2024թ. գիտական խորհրդի նիստերում վերոնշյալ փոփոխությունները հավանության են արժանացել:

AFISHE Էրազմուս+ ՀԳ2 նախագծի շրջանակում հաշվետու տարում իրականացվել են դասախոսների և տեխնիկական աշխատակցիների վերապատրաստումներ ինչպես ԵՄ-ում, այնպես էլ Հայաստանում և Ուկրաինայում: Դասախոսների կողմցի մշակվել են ուսումնառության և դասավանդման նյութերը, ՀԱԱՀ-ն ստացել է կրթություն իրականացնելու լիցենզիան և սեպտեմբերից սկսվել են բարելավված կրթական ծրագրերով ուսուցումը: Ծրագրային հանդիպումներ են իրականացվել Դուբրովնիկի և Պորտոյի համալսարաններում: Ամենակարևոր ձեռբերումներից է նաև ՀԱԱՀ-ում բացված լաբորատորիան:

2024 թ.-ից ՀԱԱՀ-ն մասնակցում է մեկ այլ նոր նախագծի՝ ֆինանսավորված *Visegrad* հիմնադրամի կողմից: Այն ևս ուղղված է փափուկ հմտությունների զարգացմանը և հանդիսանում է նախորդ նմանատիպ նախագծի շարունակությունը:

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

Մասնակցություն գիտաժողովներին և համաժողովներին և վերապատրաստումներ: 2024 թ.-ին գիտաժողովների և համաժողովների, ինչպես նաև վերապատրաստումների են մասնակցել ՀԱԱՀ 39 աշխատակիցներ

- Էրազմուս+ ՀԳ2, AFISHE նախագիծ - 18 աշխատակից
- «Օրգանական գյուղատնտեսության հզորացում Հայաստանում բարձրագույն կրթության մասնակցային և գիտելիքի փոխանակում հանուն զարգացման» SOAA ծրագրի շրջանակում – 4 աշխատակից

- Պետերբուրգյան 14-րդ միջազգային կրթական ֆորում-2 աշխատակից
- «Չինաստան-Եվրոպա երկաթուղային էքսպրեսի կողմից սննդամթերքի և գյուղատնտեսական ապրանքների միջսահմանային առևտրի և փոխադրման որակի ապահովման մասին» սեմինար – 4 աշխատակից
- Էրազմուս+ՀԳ2, վերապատրաստում Ռիգայի տեխնիկական համալսարանում – 4 աշխատակից
- Էրազմուս+ՀԳ2, վերապատրաստում Տուրկուի կիրառական գիտությունների համալսարանում - 1 աշխատակից
- VISEGRAD+, Հարավային Բոհեմիայի համալսարան – 2 աշխատակից
- EU4Diologue: Academic Cooperation Projects 2024 – 1 աշխատակից
- Էրազմուս+ՀԳ2, Միկոլաս Ռոմերիսի համալսարան- 3 աշխատակից

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

2024 թ.-ին ՀԱԱՀ աշխատակիցներն ու ուսանողները հնարավորություն են ունեցել մասնակցել վերապատրաստումների, դասընթացների և միջազգային համաժողովների և հանդիպումների:

Գործուղումներ

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	
	ուսանողներ	անձնակազմ
Էրազմուս+ ՀԳ1	15	43
Erasmus+ ՀԳ2		26
Այլ		23
Ընդամենը	**15**	**92**

ՄԿԴ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Միջազգային կապերի դեպարտամենտը (ՄԿԴ) շարունակել է ակտիվորեն տարածել միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը, ինչպես նաև բարձրացրել է աշխատանքների թափանցիկությունը և տեղեկատվության տարածման արդյունավետությունը:

Դեպարտամենտը իր բոլոր տեղեկությունները տեղադրում է համալսարանի պաշտոնական կայքում և սոց. ցանցերում՝ ապահովելով լայնածավալ հասանելիություն:

Ընթացիկ տարում ՄԿԴ-ն թարմացրեց արտաքին կապերի և միջազգայնացման քաղաքականությունը, կազմեց նոր՝ քաղաքականություն՝ միջազգայնացում տանը, որոնք հաստատվեցին ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից:

2024 թվականի փետրվարին ՄԿԴ-ն ակտիվ մասնակցություն ունեցավ Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի մրցույթին՝ պատրաստելով անհրաժեշտ փաստաթղթեր և համագործակցելով գործընկեր համալսարանների հետ:

ՄԿԴ-ն նաև մասնակցեց Եվրոպական Միության կողմից կազմակերպված Էրազմուս+ տեղեկատվական վեբինարներին և Էրազմուս+ հայաստանյան գրասենյակի կողմից անցկացված տեղեկատվական հանդիպումներին, որոնց մի քանիսին դասընթացավար էր հանդիսացել ՄԿԴ պետ Գարեգին Համբարձումյանը:

Էրազմուս+ միջազգային տեղեկատվական օրերի շրջանակներում, 2024 թվականի հոկտեմբերին, Միջազգային կապերի դեպարտամենտը (ՄԿԴ) կազմակերպել էր 2-օրյա հանդիպումներ ՀԱԱՀ 1-ին կուրսեցիների հետ: Հանդիպումների նպատակն էր ներկայացնել Էրազմուս+ ծրագրերի հնարավորությունները, ինչպես նաև բարձրացնել ուսանողների իրազեկվածությունը միջազգային փոխանակման ծրագրերի և միջազգային շարժունության վերաբերյալ: Հանդիպումները անցել են ինտերակտիվ ձևաչափով, որի ընթացքում ուսանողները հնարավորություն ունեցան հարցեր ուղղելու և մանրամասն տեղեկություններ ստանալու ծրագրերի մասին:

Այս տարի ևս ՄԿԴ-ը ակտիվորեն շարունակել է իր պաշտոնական ֆեյսբուքյան էջում և ՀԱԱՀ կայքում տեղադրել միջազգային ծրագրերի վերաբերյալ տարբեր հայտարարություններ: Դեպարտամենտը տրամադրել է տեղեկություններ Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի մրցույթների, Էրազմուս+ ծրագրի մասնակցիների լավագույն փորձի, Էրազմուս+ ՀԳ2 ծրագրերի, մրցույթների, կրթաթոշակների, տեսանյութերի և այլ նյութերի մասին: 2024 թվականին ՄԿԴ-ն տեղադրել է շուրջ 100 նյութ, որոնցից 41-ը վերաբերում էին Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի մրցույթների հայտարարություններին, 7-ը՝ Էրազմուս+ ՀԳ2 ծրագրերի ընթացիկ գործունեությանը, 23-ը՝ շարժունության մասնակիցների հոդվածներին, իսկ մնացածը՝ այլ բնույթի տեղեկատվություն: Այս կերպ,

ՄԿԴ-ն ապահովել է միջազգային ծրագրերի վերաբերյալ ուսանողների և շահառուների լիարժեք իրազեկվածությունը:

Շարժունության յուրաքանչյուր մասնակից վերադարձից հետո լրացնում է ՄԿԴ-ի կողմից տրամադրվող առցանց հարցաշարը, որով ՄԿԴ-ն վերհանում է շարժունության գործընթացի թույլ և ուժեղ կողմերը, վերլուծում արդյունքներն ու մշակում թույլ կողմերի վերացման ծրագրեր:

Հիմք ընդունելով ՄԿԴ-ի կողմից կատարվող պարբերական մոնիթորինգն ու դրանց արդյունքները, ՀԱԱՀ-ի միջազգային համագործակցության հետագա զարգացման և միջազգային հեղինակության բարձրացման նպատակով անհրաժեշտ է՝

1. **Օտար լեզուների իմացության բարձրացում** ուսանողների և աշխատակիցների շրջանում: Շարժունության շատ մրցույթներ ուղղակի թափուր են մնում կամ մասնակցում են օտար լեզվի իմացության ոչ բավարարար մակարդակով մասնակիցներ:
2. **Շարժունության ծրագրերի ակադեմիական համակարգողների նշանակում.** Էրազմուս+-ի կամ այլ կրեդիտային շարժունության ծրագրերի առավել արդյունավետ կազմակերպման համար ամեն ֆակուլտետում պետք է լինեի գոնե մեկ ակադեմիական համակարգող: Սա ամենաթույլ կետերից մեկն է ՀԱԱՀ-ում, ինչի պատճառով ՄԿԴ-ն և հատկապես՝ թեկնածու ուսանողները, բախվում են անհարկի խոչընդտների: Որոշ ակադեմիական պատաստանատուներ դեռ չեն պատկերացնում շարժունության առանձնահատկությունն ու կրեդիտների փոխճանաչման հիմնական սկզբունքները:
3. **Միջազգային ծրագրերի համար դասախոսների կարողությունների հզորացում.** բարելավել դասախոսների կարողությունը միջազգային ծրագրերի համար առաջարկներ գրելու և ներկայացնելու համար: Սա շատ կարևոր է մասնագիտացված ծրագրերին դիմելու և համալիր ծրագրերի փաթեթներ ներկայացնելու համար:
4. **Օտար լեզուների դասընթացների բազայի ստեղծում.** ստեղծել օտար լեզվով դասավանդման կրթական ծրագրերի բազա (course catalog) և տեղեկատվական նյութեր: Դրսից տարբեր մարդիկ ցանկություն են հայտնում սովորել ՀԱԱՀ-ում, սակայն դեռևս բացակայում է օտարալեզու ծրագրերի վերաբերյալ ամբողջական

տեղեկատվական բազան: ՄԿԴ-ն փորձեց ստեղծել նման բազա, սակայն դասախոսների մեծ արտահոսքի և ֆակուլտետներից ներկայացված ոչ հավաստի տվյալների պատճառով այն հետաձգվեց:

5. **Դասախոսների մասնակցության ճանաչման և պարգևատրման համակարգի մշակում.** Ստեղծել համակարգ՝ ճանաչելու և պարգևատրելու պրոֆեսորադասախոսական կազմի անդամներին, ովքեր ակտիվորեն մասնակցում և ներդրում են ունենում միջազգային ծրագրերում: Սա կարող է խթանել դասախոսների ավելի մեծ ներգրավվածությունը և նվիրվածությունը այս նախաձեռնություններին:

S	W
• ՄԿԴ աշխատակիցների ակտիվ գործունեություն, • տեղեկատվության լայն սպեկտր, ներառյալ Էրազմուս+ մրցույթները, միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրեր, մասնակիցների փորձը և այլ միջազգային հնարավորություններ	• ուսանողների սահմանափակ մասնակցություն միջազգային ծրագրերի հանդիպումներին, ինչը ցույց է տալիս նրանց թույլ հետաքրքրվածությունը • օտար լեզվին տիրապետող ուսանողների և աշխատակիցների քանակի նվազում • համապատասխան ուսումնական ծրագրերի, ընդունելության կարգի բացակայություն օտարերկրյա ուսանողների համար • սեփական միջոցների անբավարարություն տարբեր վերապատրաստման դասընթացներին ՀԱԱՀ աշխատակցիների և ուսանողների

	մասնակցությունը ֆինանսավորելու համար • որոշ ակադեմիական պատասխանատուների շրջանում շարժունության և կրեդիտների փոխճանաչման վերաբերյալ գիտելիքների պակաս, որն առաջացնում է կազմակերպչական խնդիրներ • ՀԱԱՀ-ի կողմից միջազգային նախագծերի համաֆինանսավորման կարողության բացակայություն
O	T
• ագրարային ոլորտի քաղաքականության խթանում կառավարության կողմից • կայուն միջազգային կապեր և գործընկերներ հատկապես ԵՄ համալսարանների հետ	• ուսանողների թվաքանակի պակասում, ինչը կարող է հանգեցնել որոշ ծրագրերի փակման • որոշ ԵՄ համալսարանների կողմից համագործակցության պայմանների խախտում • ՀՀ գտնվող դեսպանատների գերծանրաբեռնված վիճակ, որի պատճառով դժվարանում է իրականացնել շարժունությունը • Հայաստանում որոշ եվրոպական երկրների դեսպանատների բացակայություն երկարաժամկետ վիզաների համար • աշխարհաքաղաքական իրավիճակ